



Հաստատում եմ՝

«Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան»
հիմնադրամի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատար

Դ. Գյուրջինյան

2023-2024 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՍՊԻՐԱՆՏՈՒՐԱՅԻ
Ժ.02.02 «ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ»
ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ
ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ընդհանուր լեզվաբանության առարկան և հիմնական խնդիրները:
2. Լեզվաբանության պատմության շրջաբաժանումը:
3. Անվանման տեսությունը լեզվաբանության մեջ (Հերակլիտ, Դեմոկրիտ, Պլատոն):
4. Լեզվաբանությունը Չինաստանում:
5. Լեզվաբանությունը Հնդկաստանում: Պանինիի քերականությունը:
6. Ալեքսանդրիայի լեզվաբանական դպրոցը:
7. Լեզվաբանությունը Հին Հունաստանում (Պրոտագոր, Արիստոտել):
8. Հռոմեական քերականություն (Վառոն, Քվինտիլիան, Դոնատ):
9. Արաբական լեզվաբանություն:
10. Լեզվաբանության զարգացումը վաղ միջնադարում:
11. Լեզվաբանությունը ուշ միջնադարում (Անսելմ, Աբելյար, Աքվինացի):
12. Լեզվաբանությունը Վերածննդի դարաշրջանում:
13. Մոսկվայի լեզվաբանական դպրոցը:
14. Կազանի լեզվաբանական դպրոցը:
15. Լեզվաբանությունը 17-18-րդ դարերում. փիլիսոփայական լեզվի գաղափարը:
16. Պոր-Ռոյալի քերականությունը:
17. Պոտերնյայի լեզվաբանական ուսմունքը:
18. Երիտքերականությունը լեզվաբանության մեջ. Լայպցիգի դպրոց (Լեսկին, Բրուզման, Օստոնֆ, Պաուլ):
19. Երիտքերականության քննադատումը:
20. Բնագիտական ուղղությունը լեզվաբանության մեջ:


21. Տրամաբանական ուղղությունը լեզվաբանության մեջ:
22. Հոգեբանական ուղղությունը լեզվաբանության մեջ:
23. Գեղագիտական ուղղությունը լեզվաբանության մեջ:
24. Հասարակական ուղղությունը (սոցիոլոգիզմ) լեզվաբանության մեջ:
25. Կառուցվածքային ուղղությունը լեզվաբանության մեջ:
26. Լեզուն որպես կառուցվածք և համակարգ:
27. Հնչույթային մակարդակի ընդհանուր բնութագիրը: Հնչույթի տարբերակիչ հատկանիշների հասկացությունը, հնչույթի առանձնացման կանոնները:
28. Ձևույթային մակարդակի ընդհանուր բնութագիրը: Ձևույթի հասկացությունը:
29. Ձևույթների տեսակները: Ձևույթների նույնականացումն ու տարբերակումը:
30. Բառային մակարդակի ընդհանուր բնութագիրը: Բառի հասկացությունը: Բառը որպես լեզվի հիմնական գործառական կառուցվածքային միավոր:
31. Բառային իմաստի կառուցվածքը: Բառիմաստային դաշտի հասկացությունը:
32. Լեզվի շարահյուսական մակարդակ. շարույթ, շարույթի տեսակները:
33. Նախադասության գաղափարը լեզվում:
34. Նախադասության ակտուալ տրոհումը. թեմա և ռեմա:
35. Բառի անվանողական դերը և առարկայական վերաբերությունը:
36. Իմաստաբանական անցումների համակարգը լեզվում. փոխաբերություն, փոխանունություն, համըմբռնում:
37. Հարաբերությունների տեսակները լեզվում:
38. Լեզուն որպես նշանային համակարգ:
39. Նշանագիտությունը և նրա բաժինները: Նշանակետման գաղափարը: Նշանային համակարգի չափումները:
40. Լեզվական նշանի գաղափարը: Նշանների տիպաբանություն:
41. Նշանակցում և անդրլեզու:
42. Ցուցիչ նշաններ. Ցուցականություն:
43. Արհեստական, ձևական և բնական լեզուներ:
44. Լեզվի գործառույթները:
45. Լեզվի ճանաչողական գործառույթը:
46. Ֆ. դը. Սոսյուրի լեզվաբանական ուսմունքը:
47. Ֆ. դը. Սոսյուրի երկատումները. լեզու և խոսք:
48. Ֆ. դը. Սոսյուրի երկատումները. համաժամանակություն և տարժամանակություն:
49. Ֆ. դը. Սոսյուրի երկատումները. ներքին և արտաքին լեզվաբանություն:
50. Ֆ. դը. Սոսյուրի երկատումները. հարացույց և շարակարգ:
51. Լեզվական արժույթն ըստ Ֆ. դը. Սոսյուրի:
52. Վ. Ֆոն. Հումբոլդտի լեզվափիլիսոփայությունը:

53. Վ. Ֆոն. Հումբոլդտի հիմնական երկատումները:
54. Վ. Ֆոն. Հումբոլդտի լեզվի «ներքին» և «արտաքին» ձևի մասին:
55. Պրահայի գործառական լեզվաբանության դպրոցը: Գործառույթի հասկացությունը:
Հնչյութաբանական ուսմունք:
56. Հակադրության մեթոդը լեզվաբանության մեջ:
57. Գլոսեմատիկան որպես ուսմունք լեզվի մասին:
58. Լեզվական նշան և ֆիզուր:
59. Ֆունկցիայի և ֆունկտիվի գաղափարը ըստ Լ. Ելմսլևի:
60. Կոմուտացիոն թեստ ըստ Լ. Ելմսլևի:
61. Լ. Ելմսլևը լեզվի պլանների մասին:
62. Լեզվի և խոսքի գաղափարները լեզվաբանության մեջ /Հումբոլդտ, Սոսյուր, Ելմսլև/:
63. Ամերիկյան կառուցվածքային/ նկարագրական լեզվաբանություն /Լ. Բլումֆիլդ/:
64. Ամերիկյան կառուցվածքային/ նկարագրական լեզվաբանություն /Է. Սեպիր/:
65. Կառուցվածքային լեզվաբանության դպրոցների ընդհանուր բնութագիրը:
66. Բաշխումային վերլուծության մեթոդ:
67. Անմիջական բաղադրիչների վերլուծության մեթոդ:
68. Փոխակերպական մեթոդ:
69. Սերող քերականություն:
70. Բաղադրիչային վերլուծության մեթոդ:
71. Պատմահամեմատական լեզվաբանության ստեղծման նախադրյալները և ձևավորումը (I փուլ):
72. Պատմահամեմատական լեզվաբանության զարգացման II փուլը (Շլայխեր, Մյուլեր, Շմիդտ):
73. Լեզուների ծագումնաբանական դասակարգման սկզբունքները:
74. Պատմահամեմատական մեթոդը լեզվաբանության մեջ: Մեթոդի հիմնադիրները:
75. Պատմահամեմատական մեթոդի հիմնական գաղափարները:
76. Պատմական ուսումնասիրության մեթոդներ. ներքին և արտաքին վերականգնման մեթոդ:
77. Պատմական ուսումնասիրության մեթոդներ. լեզվաժամանակագրություն:
78. Լեզվաբանական աշխարհագրություն և տարածքային լեզվաբանություն:
79. Տեքստի լեզվաբանության հիմնական հասկացությունները. տեքստի կապակցվածություն և ամբողջականություն:
80. Համատեքստ և ենթատեքստ: Արտակա և ներակա իմաստներ:
81. Հաղորդակցման տեսության հիմնախնդիրները և հիմնական գաղափարները:
82. Խոսքային, ոչ խոսքային և հարախոսքային (պարավերբայ) հաղորդակցում:
83. Խոսքային ակտերի տեսությունը: Դրա ստեղծումը և զարգացումը:

84. Խոսքային ակտերի տեսակները և կառուցվածքը:
85. Պրոպոզիցիայի և կանխենթադրույթի հասկացությունները:
86. Կանխենթադրույթի տեսակները:
87. Գործաբանության հիմնական խնդիրները և հասկացությունները:
88. Դիսկուրսի (խոսույթի) հասկացությունը և դրա տեսակները:
89. Տեքստ և դիսկուրս:
90. Նախադասություն և ասույթ:
91. Հանրալեզվաբանության հիմնահարցերը:
92. Հոգելեզվաբանության հիմնահարցերը:
93. Ճանաչողական (կոգնիտիվ) լեզվաբանության հիմնահարցերը:
94. Ազգալեզվաբանություն (էթնոլեզվաբանություն):
95. Սեպիր-Ուորֆի վարկածը (լեզվաբանական հարաբերականության տեսություն):
96. Լեզվափիլիսոփայության հիմնահարցերը:
97. Լեզու և մտածողություն:
98. Աշխարհի լեզվական և հասկացութային պատկերները:
99. Նշանակություն և իմաստ:
100. Նեոհումբոլդտականությունը լեզվաբանության մեջ:

Լեզվաբանության և հաղորդակցման

տեսության ամբիոնի վարիչ՝



L. Բադայան